https://doi.org/10.46991/SL/2023.97.126

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ[1]

Մանե Մարկոսյան
ԵՊՀ ռեկտորի խորհրդական,
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Ներածություն.

Տասնամյակներ շարունակ հանքարդյունաբերությունը (այսուհետ՝ նաև «ընդերքօգտագործում») ազգային տնտեսությանն աջակցող հիմնական ճյուղերից մեկն է, որը ՀՀ-ում ապահովում է արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ու արտարժույթի էական ներհոսքը[2]: Հանքարդյունաբերությունը թափոնների արտադրման ծավալով աշխարհում խոշորագույնն է՝ **տարեկան շուրջ 70 մլրդ տոննա**[3]: Մեր հանրապետությունում, ինչպես ամբողջ աշխարհում, հանքարդյունաբերության արդյունքում ավելի շատ թափոն է առաջանում, քան որևէ այլ ոլորտում[4]: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների՝ ՀՀ-ում հանքարդյունաբերության արդյունքում **2019-2021** թվականներին առաջացած թափոնների քանակը աճ է գրանցել՝ 2021 թվականին կազմելով **88 170.35** տոննա[5]:

Բացի այդ, ներկայումս հանքարդյունաբերության թափոնները ձեռք են բերել տնտեսական մեծ նշանակություն և դարձել են քաղաքացիաիրավական գործարքների ինքուրույն առարկա, ինչը, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված է դրանց ծավալի մեծացմամբ, վերամշակման նոր տեխնոլոգիաների ի հայտ գալով[6]: Հանքարդյունաբերության թափոնների նկատմամբ գործարարության ոլորտում հետաքրքրվածության մեծացմանը զուգահեռ, ավելանում է նաև պետությունների ուշադրությունը հանքարդյունաբերության արդյունքում թափոնների առաջացրած էկոլոգիական անվտանգության խնդիրների նկատմամբ[7]:

---

[1] Սույն հոդվածը զեկուցվել է 2023թ. դեկտեմբերի 7-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:

[2] Տե՛ս ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների պլանը (մինչև 2035 թվականը) հաստատելու մասին» N 730-Լ որոշումը, (11.05.2023) (12.05.2023), Հավելված N 1:

[3] Տե՛ս **Վ. Վիվոդա և Զ. Ֆուլչեր,** «Հանքարդյունաբերական թափոնների դասակարգում և կառավարում (Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք, Աշխատանքային փաստաթուղթ 1, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն)», ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան, Երևան, Հայաստան, 2017, էջ 2: http://mlri.crm.aua.am (մուտք 10.11.2023)

[4] Տե՛ս Համաշխարհային բանկ, «Էս-էլ Ար Քոնսալթընթս», «ԱՎԱԳ Սոլյուշնս», ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, ՀԱՀ-ի Թուրփանջյանի անվան քաղաքականության վերլուծության կենտրոն, «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում», Հայաստան, 2016, էջ 140:

[5] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե (Արմստատ), (I1-1) Թափոնների առաջացումը , ըստ գործունեության տեսակների, ըստ վտանգավորության դասերի և ըստ տարիների (մուտք 12.11.2023):

[6] Տե՛ս **В.В. Левочко,** "Проблемы гражданско-правового режима отходов в недропользовании: теория и практика", DOI 10.22394/1818-4049-2017-78-1-180-187, УДК 347.1:34.03, Власть и управление на Востоке России, 2017, No 1 (78), с. 180-187.

[7] Տե՛ս նույն տեղը:

Չնայած ընդերքօգտագործման թափոնների կարևոր նշանակությանը՝ դրանց նկատմամբ սեփականության իրավազորությունների (տիրապետում, տնօրինում, օգտագործում) իրականացման հետ կապված հարցերը դուրս են մնացել օրենսդրական կարգավորման դաշտից[1], ինչը առաջացնում է բազում խնդիրներ և վեճեր թե՛ տեսական մակարդակում, թե՛ պրակտիկայում[2]: Հարց է առաջանում՝ ո՞վ է ընդերքօգտագործման թափոնների սեփականատերը՝ պետությո՞ւնը, թե՞ ընդերքօգտագործողը: Նշվածի համատեքստում ընդգծվում են ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի իրականացման հարցի ուսումնասիրության և վերլուծության անհրաժեշտությունը ու արդիականությունը:

Սույն աշխատանքի նպատակն է համակողմանի վերլուծել ընդերքօգտագործման թափոնների՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի սեփականության իրավունքի հարցերը:

Այդ նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- Ընդերքօգտագործման թափոնների՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի հասկացության սահմանում,
- Ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավունքի շուրջ դատական պրակտիկայում ծագող վեճերի ուսումնասիրություն և վերլուծություն,
- ՀՀ-ում ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի վերաբերյալ օրենսդրական կարգավորումների ուսումնասիրության արդյունքում առկա օրենսդրական բացերի և խնդիրների բացահայտում, վերլուծություն և անհրաժեշտ իրավակարգավորումների շրջանակի վերհանում:

Սույն աշխատանքի մեթոդոլոգիական բազան են կազմում գիտական հետազոտության ինչպես ընդհանուր (վերլուծական, պատմական), այնպես էլ հատուկ մեթոդները (իրավահամեմատական, դոգմատիկ):

Ընդերքօգտագործման թափոնների հասկացությունը.

Իրավաբանական գրականության մեջ **ընդերքօգտագործման թափոնները** դասվել են ընդերքօգտագործման **«խառը»** տիպի օբյեկտների շարքին: Դրանք առաջանում են ընդերքի օգտագործման արդյունքում, ունեն սահմանափակ շրջանառունակություն, կամ որոնց շրջանառունակությունը պայմանավորված է մի կողմից՝ քաղաքացիաիրավական, իսկ մյուս կողմից՝ վարչական և էկոլոգիական օրենսդրության նորմերի կիրառմամբ[3]:

Ընդերքօգտագործման թափոնները որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտներ հանդես են գալիս **2 խումբ իրավահարաբերություններում:** Դրանք են՝

1) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցման, կառավարման, փակման իրավահարաբերությունները,

2) ընդերքի երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոների արդյունահանման, վերամշակման իրավահարաբերությունները[4]:

Ընդերքի օգտագործման հարաբերությունները կարգավորող նախկին օրենսդրությունը՝ **«Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնա-**

---

[1] Տե՛ս Համաշխարհային բանկ, «էս-էլ Արֆ Քոնսալթընթս», «ԱՎԱԳ Սոլյուշնս», ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, ՀԱՀ-ի Թուրփանջյանի անվան քաղաքականության վերլուծության կենտրոն, նշված աշխատ., էջ 161:

[2] Տե՛ս **В.В. Левочко, "**Проблемы гражданско-правового режима отходов в недропользовании: теория и практика", DOI 10.22394/1818-4049-2017-78-1-180-187, УДК 347.1:34.03, Власть и управление на Востоке России, 2017, No 1 (78), с. 180-187.

[3] Տե՛ս **В.В. Левочко**, "Объекты гражданских прав в недропользовании", https://elib.sfu-kras.ru/handle/2311/147151?show=full (մուտք 12.11.2023), с. 10-11, 52, 79:

[4] Տե՛ս **Левочко В.В.,** "Проблемы гражданско-правового режима отходов в недропользовании: теория и практика", DOI 10.22394/1818-4049-2017-78-1-180-187, УДК 347.1:34.03, Власть и управление на Востоке России, 2017, No 1 (78). с. 180-187.

սիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքը[1] ընդհանրապես չէր տալիս **ընդերքօգտագործման թափոնների** սահմանումը, այլ նախատեսում էր միայն դրանց հեռացման և տեղադրման վերաբերյալ որոշ իրավակարգավորումներ (Օրենքի 20-րդ հոդված, 37-րդ հոդված, 41-րդ հոդված):

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում **(այսուհետ նաև՝ Օրենսգիրք)**[2] մինչև 2016 թվականը, **«**ընդերքօգտագործման թափոններ**»** եզրույթից բացի, օգտագործվում էին **«տեխնածին հանքավայր»** հասկացությունը (3-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետ)՝ որպես օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և հարստացման արդյունքում ձևավորված օգտակար հանածոյի կուտակումներ, և **«արտադրական լցակույտերը»**՝ նույն հետևանքներով առաջացած ապարների կուտակումներ: Ընդ որում, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 14-րդ հոդվածը[3] կարգավորում էր տեխնածին հանքավայրերի և արտադրական լցակույտերի նկատմամբ սեփականության իրավունքի հարցերը, որոնց առավել մանրամասն կանդրադառնանք ստորև:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի և «Թափոնների մասին» ՀՀ օրենքի համադրված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ **«արտադրական լցակույտ»** և **«ընդերքօգտագործման թափոն»** եզրույթները նույն իմաստն ունեն: Մասնավորապես, Օրենսգիրքը սահմանում է **արտադրական լցակույտերը** որպես օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում **առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ): «Ընդերքօգտագործման թափոններ» հասկացությունը սահմանալու նպատակով** օրենսդիրը հղում է կատարում **«Թափոնների մասին»** ՀՀ օրենքին[4], որի 4-րդ հոդվածի համաձայն՝ **ընդերքօգտագործման թափոններ են** օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և հարստացման արդյունքում առաջացած մակաբացման ապարները և այլ թափոնները:

Օրենսդիրը չի սահմանում պահանջներ ընդերքօգտագործման թափոնների՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտների շրջանառունակության վերաբերյալ: Բացառություն են միայն ընդերքօգտագործման այն թափոնները, որոնք առաջանում են ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության արդյունքում, քանի որ ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ է հատուկ թույլտվություն (Օրենսգիրք, 20-րդ հոդվածի 4-րդ մաս):

Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության աստիճանի դասակարգման կարգը սահմանող ՀՀ կառավարության 2017 հուլիսի 08-ի N 689-Ն որոշմամբ[5] ըստ շրջակա միջավայրի վրա թափոնների վնասակար ազդեցության աստիճանի՝ ընդերքօգտագործման թափոնները դասակարգվել են 5 դասերի: Սակայն հարկ է նշել, որ այս դասակարգումը ևս ընդերքօգտագործման թափոնների՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտների իրավական ռեժիմը որոշելու տեսանկյունից իրավական նշանակություն չունի:

Ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավունքի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները.

Սեփականության իրավահարաբերությունները ամրապնդվում և պաշտպանվում են պետության կողմից, որը օրենսդրական մակարդակով սահմանում է

---

[1] Ընդունվել է 05.11.2002: Ուժի մեջ է մտել 01.04.2003: Ուժը կորցրել է 01.01.2012:

[2] Տե՛ս ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք: Ընդունվել է 28.11.2011: Ուժի մեջ է մտել 01.01.2012: Սկզբնակղբյուրը՝ ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ.1661:

[3] Օրենսգրքի 14-րդ հոդվածն ուժը կորցրել է 2016 թվականի հոկտեմբերի 18-ի ՀՕ-161-Ն օրենքով:

[4] Ընդունվել է 24.11.2004: Ուժի մեջ է մտել 07.01.2005:

[5] Ընդունվել է 15.06.2017: Ուժի մեջ է մտել 08.07.2017: Տե՛ս ՀՀՊՏ 2017.06.28/41(1316) Հոդ.654:

համապատասխան սուբյեկտների միջև սեփականության տիրապետման, օգտագործման և տնօրինման հարաբերությունները կարգավորող իրավական նորմեր[1]: Դրանց շնորհիվ սեփականության հարաբերություններն ստանում են իրավահարաբերությունների ձև, իսկ դրանց սուբյեկտներն օժտվում են համապատասխան լիազորություններով, որոնք պաշտպանվում են պետության սահմանած նորմերով[2]:

Նոր խմբագրությամբ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրվել է ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականությունը: Այսինքն, ընդերքօգտագործման իրավահարաբերություններում պետությունը ոչ միայն սահմանում է սեփականության իրավունքի նորմերը, այլև այդ իրավահարաբերության կողմ է:

Ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավունքի շուրջ ծագող իրավահարաբերությունները ենթակա են կարգավորման ՀՀ Սահմանադրության[3], ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող հատուկ նորմեր սահմանող՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի նորմերով:

ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը անդրադառնում է միայն ընդերքօգտագործման **թափոնների կառավարման և վերամշակման հարաբերություններին**՝ սահմանելով շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա ընդերքօգտագործման թափոնների բացասական ազդեցության կանխմանը կամ նվազեցմանը ուղղված իմպերատիվ կարգավորումներ (*Օրենսգիրք, 3-րդ հոդված, 5.1-ին Գլուխ)*:

Ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավազորությունների իրականացման վերաբերյալ միակ դրույթը սահմանված է **Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում**[4], որի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունք կրող անձը իրավունք ունի Օրենսգրքի պահանջների պահպանմամբ հանքարդյունահանման իրավունքի ընթացքում **օգտագործելու սեփական գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերը:** Այսինքն, օրենսդիրը սահմանել է միայն ընդերքօգտագործողի՝ սեփական գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերը օգտագործելու իրավազորությունը՝ չկարգավորելով արտադրական լցակույտերի տիրապետման և տնօրինման իրավունքների հարցերը:

Ավելին, ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավունքի հարցը կարգավորված չէ նաև ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 22-ի N 437-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևում (այսուհետ՝ Օրինակելի պայմանագիր): Այսպես, Օրինակելի պայմանագրի 3.3.4-րդ կետը նախատեսում է միայն **ընդերքօգտագործողի՝ արդյունահանված օգտակար հանածոն և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված օգտակար բաղադրիչները տնօրինելու իրավունքը:**

Գործող օրենսդրության վերլուծության արդյունքում ստացվում է, որ Օրենսգրքի և Օրինակելի պայմանագրի միջև ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ ընդերքօգտագործողի գույքային իրավունքների իրականացման ծավալի մասով առկա է որոշակի հակասություն: Այսպես, Օրենսգիրքը սահմանել է ընդերքօգտագործողի՝ սեփական գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերը օգտագործելու իրավազորությունը, մինչդեռ Օրինակելի պայմանագի-

---

[1] Տե՛ս **Օ. Գեղամյան**, «Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի որոշ առանձնահատկությունները ՀՀ օրենսդրության մեջ և պրակտիկայում», Պետություն և իրավունք, թիվ 1 (86) 2020թ., էջ 4-12:

[2] Տե՛ս **Տ.Կ. Բարսեղյան**, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք. առաջին մաս», ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 291:

[3] Ընդունվել է 06.12.2015: Ուժի մեջ է մտել 22.12.2015: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

[4] Տե՛ս նաև ՀՀ կառավարության 2012թ. մարտի 22-ի N 437-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված ընդերքօգտագործման օրինակելի պայմանագրի 3.3.5-րդ կետը:

ը՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված օգտակար բաղադրիչները տնօրինելու իրավազորությունը: Այստեղ հարց է առաջանում՝ արդյո՞ք Օրենսգրքի 59-րդ հոդվածում օրենսդիրը նկատի է ունեցել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածով սահմանված օգտագործման իրավունքը, որը տարանջատված է գույքի տնօրինման իրավունքից և չի ենթադրում գույքը տնօրինելու՝ գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահոված հնարավորությունը:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը մինչև 2016թ. փոփոխությունները կարգավորում էր օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման արդյունքում առաջացող՝ արտադրական լցակույտերի և տեխնածին հանքավայրերի նկատմամբ սեփականության իրավունքի իրավական ռեժիմը: Համաձայն Օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ տեխնածին հանքավայրերը համարվում էին պետության բացառիկ սեփականությունը: Ինչ վերաբերում է արտադրական լցակույտերին, ապա նույն հոդվածի համաձայն՝ ընդերքօգտագործողի գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերի նկատմամբ ընդերքօգտագործողի սեփականության իրավունքը **դադարում էր ընդերքօգտագործման թույլտվության դադարման հիմքով**: Մինչդեռ ընդերքօգտագործողի սեփականության իրավունքի դադարման նշված հիմքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ գլխում սահմանված՝ սեփականության իրավունքի դադարման հիմքերի շրջանակում մեկնաբանման դեպքում ընդերքօգտագործողի սեփականության իրավունքի դադարման փաստը ընդերքօգտագործման թույլտվության դադարմամբ պայմանավորելը իրավաչափ չէ:

Առանձին դեպքում ՀՀ-ում արտադրական լցակույտերի նկատմամբ սեփականության իրավունքի վերաբերյալ հարցը կարգավորվել է օրենքով[1]՝ ներդրումային ծրագրի շրջանակներում արտադրական լցակույտերի մշակման նպատակով: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 6-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը տվյալ դեպքում արտադրական լցակույտերի սեփականատեր է համարել Հայաստանի Հանրապետությանը, և օրենքը կարգավորում է արտադրական լցակույտերի սեփականության իրավունքի փոխանցման հարաբերությունները ներդրումային ծրագրի իրականացման նպատակով: Ուստի, հաշվի առնելով, որ Օրենքում նշված ներդրումային ծրագրի շրջանակում օրենսդրորեն հատուկ ընդգծվել է արտադրական լցակույտների նկատմամբ ՀՀ սեփականության իրավունքի ծագման փաստը, կարելի է նաև եզրահանգել, որ մնացած դեպքերում, երբ օրենսդրի կողմից նշված հարցը առանձնահատուկ կարգավորում չի ստացել (ընդհանուր կանոնից բացառություն սահմանելու կանոն) գործում է ընդերքօգտագործողների սեփականության կանխավարկածը:

Մտահոգիչ է, որ տեսական գրականության մեջ նույնպես հանքարդյունաբերության թափոնների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները մեծ մասամբ նվիրված են ընդերքօգտագործման թափոնների կառավարման (waste management)[2] և էկոլոգիական ռիկսերի նվազեցման հարցերին, իսկ ընդերքօգտագործման թափոնների՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների օբյեկտների առանձին ուսումնասիրությունը և վերլուծությունը անհիմն կերպով

[1] Տե՛ս «Ողջիի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված և կուտակվող, ինչպես նաև «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության արդյունքում գոյացած և գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին» ՀՀ օրենքը: Ընդունվել է 23.06.2015: Ուժի մեջ է մտել 01.08.2015: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2015.07.22/46(1135) Հոդ.634:

[2] Տե՛ս https://environment.ec.europa.eu/topics/waste-and-recycling/mining-waste_en (մուտք 11.11.2023), ինչպես նաև https://wga-ace.aua.am/files/2020/07/WGA-Report-Arm.pdf (մուտք 11.11.2023):

շրջանցվել են[1]: Ըստ **Ն.Վ. Կիչիգինի, Մ.Վ. Պոնոմարյովի**՝ հանքարդյունաբերության թափոնների ճանաչումը որպես սեփականության իրավունքի օբյեկտ հնարավորություն է ստեղծում դրանք ներգրավելու տնտեսական շրջանառության մեջ և դարձնում է դրանք քաղաքացիաիրավական գործարքների առարկա[2]:

Մեր կարծիքով՝ ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի հարցը անհրաժեշտ է քննարկել նաև **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի**[3] 144-րդ և 174-րդ հոդվածների լույսի ներքո, քանի որ նշված իրավական նորմերը կոչված են ապահովելու քաղաքացիաիրավական հարաբերություններում կողմերի գույքային շահերի հավասարակշռությունը:

Առաջինը հարկ է անդրադառնալ ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի իրականացման հարցերին **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 144-րդ հոդվածի** և **Օրենսգրքի 59-րդ հոդվածի** համադրության համատեքստում: Եթե դիտարկենք ընդերքօգտագործման թափոնները որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված գույքի (ընդերքի) օգտագործման արդյունքում ստացված օբյեկտներ, ապա եզրահանգում ենք, որ դրանք պատկանում են գույքը (տվյալ դեպքում՝ ընդերքը) օգտագործողին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ ընդերքօգտագործման պայմանագրով: Մյուս կողմից էլ, եթե այս տրամաբանությամբ վերլուծենք ընդերքօգտագործման ոլորտում քաղաքացիական իրավունքների մյուս օբյեկտների՝ ընդերքի և օգտակար հանածոների սեփականության իրավունքի հարցը, ապա կստացվի, որ օրենսդիրը, որպես ընդերքի բացառիկ սեփականատեր սահմանելով պետությանը, իսկ օգտակար հանածոյի սեփականատեր՝ ընդերքօգտագործողին, կատարել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնից բացառություն:

Հատկանշական է, որ եթե ընդերքօգտագործման թափոնները դիտարկենք որպես գույքի օգտագործման արդյունքում ստացված օբյեկտներ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, ապա կստանանք հակառակ պատկերը: Ի տարբերություն ՀՀ օրենսդրության՝ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն[4]՝ գույքի օգտագործման արդյունքում ստացված պտուղները, եկամուտները պատկանում են ոչ թե գույքը օգտագործողին, այլ գույքի սեփականատիրոջը: Այսինքն, օգտակար հանածոների և ընդերքօգտագործման թափոնների սեփականատերը ընդերքի բացառիկ սեփականատերն է՝ պետությունը[5]:

Երկրորդ, քննարկենք ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հարցը **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 174-րդ հոդվածի** լույսի ներքո՝ որպես անձի կողմից իրեն չպատկանող գույքի վերամշակման արդյունքում ստեղծված նոր շարժական գույք: Այսպես, Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ արտադրական լցակույտերը առաջանում

---

[1] Տե՛ս **Левочко В.В.**, “Проблемы гражданско-правового режима отходов в недропользовании: теория и практика”, DOI 10.22394/1818-4049-2017-78-1-180-187, УДК 347.1:34.03, Власть и управление на Востоке России, 2017, No 1 (78). с. 180-187.

[2] Տե՛ս նույն տեղը:

[3] Ընդունվել է 05.05.1998: Ուժի մեջ է մտել 01.01.1999: Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

[4] Տե՛ս "Гражданский кодекс Российской Федерации" от 30.11.1994 N 51-ФЗ (ред. от 24.07.2023) (с изм. и доп., вступ. в силу с 01.10.2023).

[5] Տե՛ս Закон Российской Федерации "О недрах", *(в ред. от 3 марта 1995 г.), (с изменениями от 10 февраля 1999 г., 2 января 2000 г., 14 мая, 8 августа 2001 г.),* Статья 1.2. http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/ (մուտք 09.11.2023), Տե՛ս նաև **В.В. Левочко,** “Добытые ресурсы недр как объекты гражданских прав: анализ законодательства”, Вестник московского городского педагогического университета, Серия «Юридические науки», 2017, No 3 (27), с. 127-141:

են նաև օգտակար հանածոների վերամշակման արդյունքում, իսկ արդյունահանված օգտակար հանածոները ընդերքօգտագործողի սեփականությունն են *(Օրինակելի պայմանագրի 3.3.4-րդ կետ)*: Այսինքն, վերամշակողը և նյութերի սեփականատերը նույն սուբյեկտ է՝ ընդերքօգտագործողը: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 174-րդ հոդվածը չի կիրառվի:

Ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավունքի վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկան.

Հակասական են նաև ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավունքի վերաբերյալ **դատական պրակտիկայում** ձևավորված դիրքորոշումները: Այսպես, ընդերքօգտագործման թափոններում պարունակվող օգտակար բաղադրիչների օգտագործման թույլտվությունը և դրանց օտարման գործարքը անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցի շրջանակներում ՌԴ արբիտրաժային դատարանը հանգել է այն եզրակացության, որ ընդերքօգտագործման թափոնները ունեն քաղաքացիական ինքնուրույն օբյեկտի իրավական կարգավիճակ, այդ պատճառով չեն կարող հանդիսանալ պետության սեփականությունը[1]:

Մեկ այլ դատական գործով նշվել է, որ ընդերքօգտագործման թափոնները (տվյալ դեպքում՝ պոչանքները) պետք է դիտարկել որպես ընդերքօգտագործման ձեռնարկատիրական գործունեության մեկ գույքային համալիրի բաղադրիչ[2]:

Հիշատակման է արժանի դատական պրակտիկայում արտահայտված դիրքորոշումը, որի համաձայն՝ ընդերքօգտագործողները ազատ են որոշելու, թե ընդերքի օգտագործման արդյունքում առաջացած որ գույքը համարել ընդերքօգտագործման թափոններ[3]: Դատական պրակտիկայում առկա է նաև դիրքորոշում առ այն, որ թափոնների կառավարման պլանով նախատեսված գործողությունները (օրինակ՝ դրանց փոխադրումը, հեռացումը, թաղումը) դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում առաջացնող իրավաբանական փաստեր են[4]:

Հայրենական դատական պրակտիկայում հետաքրքրական է ՀՀ սնանկության դատարանի թիվ **ԵԴ/0922/04/18** սնանկության գործի շրջանակներում ընդերքօգտագործող ընկերության կողմից շահագործվող հանքավայրում տեղակայված ընդերքօգտագործման թափոնների տնօրինման հարցի շուրջ ծագած վեճը[5]: Մասնավորապես, տվյալ գործով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը վիճարկել էր ՀՀ սնանկության դատարանի 25.06.2020թ. **«Գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվություն տալու մասին»** որոշումը, որի համաձայն՝ ՀՀ սնանկության դատարանը բավարարել էր ընդերքօգտագործող ընկերության սնանկության կառավարչի՝ ընդերքօգտագործման թափոնակույտը վաճառելու միջնորդությունը: Վերաքննիչ բողոքի հիմքում բողոքաբերը դրել էր այն հանգամանքը, որ վեճի առարկա հանդիսացող թափոնակույտը պետության սեփականությունն է, ուստի ընդերքօգտագործողը չունի այդ գույքը տնօրինելու իրավասություն: Սույն գործի շրջանակներում ՀՀ սնանկության դատարանը գործի նոր քննության արդյունքում որոշումն անփոփոխ է թողել՝ պատճառաբանելով, որ դա-

[1] Տե՛ս Постановление ФАС Северо-Кавказского округа от 03.06.2013 по делу № А53-9523, http://ras.arbitr.r (մուտք 09.11.2023).

[2] Տե՛ս Определение Мирнинского районного суда Республики Саха (Якутия) от 28.06.2013 по делу № 9-222/2013:

[3] Տե՛ս Постановление Пятнадцатого Арбитражного апелляционного суда от 30.09.2014 по делу No А32-14760/2014; Տե՛ս նաև Постановление Тринадцатого Арбитражного апелляционного суда от 09.12.2014 по делу No А56-511/2014. http://ras.arbitr.ru (մուտք 04.10.2023) .

[4] Տե՛ս Постановление Девятого арбитражного апелляционного суда от 07.04.2015 No 09АП-5028/2015 по делу No А40-160441/14. http://ras.arbitr.ru (մուտք 04.10.2023).

[5] Տե՛ս http://www.datalex.am/?app=AppCSaseSearch&case_id=45880421203908589 (մուտք 06.10.2023):

տարանն օժտված չէ գույքի պատկանելիության վերաբերյալ ըստ էության քաղաքացիաիրավական վեճ լուծելու իրավասությամբ: Ուշագրավ է, որ սույն վեճը Վերաքննիչ դատարանի կողմից մի քանի անգամ նոր քննության ուղարկվելու և ՀՀ սնանկության դատարանի կողմից որոշումը յուրաքանչյուր անգամ անփոփոխ թողնելու արդյունքում քննվում է արդեն շուրջ երեք տարի[1], և սնանկության վարույթի շրջանակներում ընդերքօգտագործման թափոնակույտի սեփականության և այն օտարելու իրավունքի առկայության հարցերը դեռևս չեն լուծվել:

Եզրակացություն.

Ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավունքի հարցերը ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չեն, որի պատճառով դրանց սեփականության իրավունքի շուրջ տեսական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում ծագում են վեճեր: Գործող օրենսդրական բացերի պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 144-րդ և 174-րդ հոդվածների կիրառման արդյունքում ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավունքի հարցը ևս միանշանակ չի լուծվում:

Նշված համատեքստում հնարավոր է խնդրի լուծման 2 տարբերակ.

Տարբերակ 1. Պետությունը՝ ընդերքօգտագործման թափոնների սեփականատեր.

1-ին տարբերակի շրջանակներում կարող է քննարկվել Օրենսգրքում պետությանը որպես ընդերքօգտագործման թափոնների սեփականատեր սահմանելը՝ նախատեսելով ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ ընդերքօգտագործման թույլտվության գործողության ընթացքում ընդերքօգտագործողի գույքային իրավունքների ծավալը: Նմանատիպ կարգավորումներ սահմանված էին ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում մինչև 2016թ. փոփոխությունները, սակայն դրանք նախատեսում էին պետության սեփականության իրավունքի ծագումը ընդերքօգտագործման իրավունքի դադարումից հետո, իսկ այս իրավունքի գործողության ընթացքում ընդերքօգտագործման թափոնների սեփականատերը ընդերքօգտագործողն էր: Սակայն նման իրավակարգավորումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում արտահայտված՝ սեփականության իրավունք ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքի ինստիտուտի լույսի ներքո մեկնաբանման դեպքում սեփականության իրավունքի սուբյեկտի համար իրավական որոշակիություն և կանխատեսելիություն չի ապահովում[2]: Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է խուսափել օրենսդրությամբ ընդերքօգտագործման հարաբերությունների սուբյեկտների սեփականության ժամանակավոր իրավունք սահմանող նորմեր նախատեսելուց:

1-ին տարբերակից բխում է, որ ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավունքը[3] մեկնաբանվելու է որպես ընդերքի տեղամասերի և ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ պետության սեփականության իրավունք, իսկ ընդերքօգտագործողը սեփականության իրավունք է ձեռք բերելու միայն վերջինիս ընդերքօգտագործման թույլտվության գործողության ընթացքում արդյունահանված օգտակար հանածոների նկատմամբ:

Տարբերակ 2. Ընդերքօգտագործողը՝ ընդերքօգտագործման թափոնների սեփականատեր.

Որպես 2-րդ տարբերակ կարող է ծառայել ընդերքօգտագործողի՝ ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավունքի սահմանումը՝ կիրառելով ՀՀ

---

[1] Տե՛ս թիվ ԵԴ/0922/04/18 սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.04.2023թ. որոշումը:

[2] Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 07.05.2002 թվականի որոշումը, Բեյլերն ընդդեմ Իտալիայի գործով 05.01.2000 թվականի որոշումը:

[3] ՀՀ Սահմանադրություն, հոդված 10, 2-րդ մաս:

քաղաքացիական օրենսգրքի 144-րդ հոդվածում տեղ գտած կանոնները: Այս դեպքում ընդերքօգտագործման թափոնները կդիտարկվեն որպես ընդերքի օգտագործման արդյունքում ստացված օբյեկտներ, ինչպես օգտակար հանածոները:

Սակայն, մեր կարծիքով, քննարկվող տարբերակը ունի մի շարք բացասական կողմեր: Նախ, ստացվում է, որ ընդերքի նկատմամբ պետության բացառիկ սեփականությունը մեկնաբանվելու է որպես միայն ընդերքի տեղամասերի նկատմամբ պետական սեփականություն, իսկ ընդերքում առկա և քաղաքացիաիրավական գործարքների առարկա հանդիսացող օբյեկտները ընդերքօգտագործողի սեփականությունն են համարվելու:

Բացի այդ, ընդերքօգտագործողը նշված տարբերակի կիրառման դեպքում հնարավորություն կստանա խուսափել Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված հարկային պարտավորություններից, քանի որ հանքարդյունաբերության թափոնները չեն հարկվում: Նշված լուծումը կիրառելու դեպքում պետությունը կարող է բարձրացնել ռոյալթիի արժեքը[1]:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավահարաբերությունները և անդրադառնալ ընդերքօգտագործման թափոնների՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտների վերաբերյալ հետևյալ իրավական խնդիրներին.

1) Օրենսդրությամբ «ընդերքօգտագործման թափոններ» և «արտադրական լցակույտեր» եզրույթների տարբերակում,

2) Ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտի և սեփականության իրավունքի ծագման պահի սահմանում,

3) Ընդերքօգտագործման իրավունքի գործողության ընթացքում ընդերքօգտագործողի՝ ընդերքօգտագործման թափոնների նկատմամբ սեփականության իրավազորությունների ծավալի հստակեցում,

4) ՀՀ ընդերքի մասին օրենսգրում և ընդերքօգտագործման ոլորտի օրինակելի պայմանագրերը սահմանող ենթաօրենսդրական ակտում ընդերքօգտագործման թափոնների սեփականության իրավունքի վերաբերյալ նորմերի միջև հակասությունների վերացում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, (06.12.2015), (22.12.2015), ՀՀՊՏ 2015.12.21 /Հատուկ թողարկում Հոդ. 1118: (Constitution of the Republic of Armenia).

2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, (05.05.1998), (01.01.1999), ՀՀՊՏ 1998.08.10/17(50): (The Civil Code of the Republic of Armenia).

3. ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք, (28.11.2011), (01.01.2012), ՀՀՊՏ 2011.12.21/69(872) Հոդ.1661: (The RA Subsoil Code).

4. «Թափոնների մասին» ՀՀ օրենք, (24.11.2004), (07.01.2005), ՀՀՊՏ 2004.12.28/72(371) Հոդ.1480: (The RA Law on Waste).

5. «Ողջիի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված և կուտակվող, ինչպես նաև «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության արդյունքում գոյացած և գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին» ՀՀ օրենքը, (23.06.2015), (01.08.2015) (The RA Law “On the Investment Program for the Development of Industrial Dumps Accumulated and Accumulated in the Vokshi, Phrut,

[1] Համաշխարհային բանկ, «Էս-Էլ Ար Քոնսալթընթս», «ԱՎԱԳ Սոլյուշնս», ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, ՀԱՀ-ի Թուրփանջյանի անվան քաղաքականության վերլուծության կենտրոն, նշված աշխատ., էջ 150-151:

Arts Vanik Tailings Dumps, as well as those formed and forming as a result of the activities of “Zangezur Copper-Molybdenum Combine” CJSC”).

6. ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի N 730-L որոշում, (11.05.2023) (13.05.2023) (Decision of the Government of the Republic of Armenia N 730-L dated May 11, 2023).

7. ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 08-ի N 689-Ն որոշում, (15.06.2017), (08.07.2017), ՀՀՊՏ 2017.06.28/41(1316) Հոդ.654 (Decision of the Government of the RA N 689-N dated July 08, 2017).

8. ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշում, (22.03.2012), (20.04.2012), ՀՀՊՏ 2012.04.19/20(894).1 Հոդ.463.3 (Decision of the Government of the Republic of Armenia N 437-N dated March 22, 2012).

9. «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքը, (ուժը կորցրել է 01.01.2012 թվականին) (The RA Law "On granting (concession) of subsoil for the study and extraction of minerals for the purpose of exploitation”).

10. "Гражданский кодекс Российской Федерации" (30.11.1994) N 51-ФЗ (ред. от 24.07.2023) (с изм. и доп., вступ. в силу с 01.10.2023) (“The Civil Code of the Russian Federation”).

11. Закон Российской Федерации "О недрах", *(в ред. от 3 марта 1995 г.), (с изменениями от 10 февраля 1999 г., 2 января 2000 г., 14 мая, 8 августа 2001 г.)* http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/ (09.11.2023) (The Law of Russian Federation on Subsoil).

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 07.05.2002 թվականի որոշումը (The Decision of the European Court of Human Rights in the case of Burdov v. Russia dated 07.05.2022).

13. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բեյլերն ընդդեմ Իտալիայի գործով 05.01.2000 թվականի որոշումը (The Decision of the European Court of Human Rights in the case of Beyeler v. Italy dated 05.01.2000).

14. Թիվ ԵԴ/0922/04/18 սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.04.2023թ. որոշումը (The decision ED/0922/04/18 of the RA Civil Court of Appeal dated 06.04.2023 in the bankruptcy case).

15. Постановление Девятого арбитражного апелляционного суда от 07.04.2015 N 09АП-5028/2015 по делу N А40-160441/14, http://ras.arbitr.ru (04.10.2023) (The decision of the Ninth Arbitration Court of Appeal dated 07.04.2015 No. 09AP-5028/2015 on case N A40-160441/14).

16. Постановление Пятнадцатого Арбитражного апелляционного суда от 30.09.2014 по делу N А32-14760/2014 (The decision of the Fifteenth Arbitration Court of Appeal dated 30.09.2014 on case No A32-14760/2014).

17. Постановление Тринадцатого Арбитражного апелляционного суда от 09.12.2014 по делу N А56-511/2014, http://ras.arbitr.ru/ (04.10.2023) (The decision of the Thirteenth Arbitration Court of Appeal dated 09.12.2014 on case N A56-511/2014).

18. Постановление ФАС Северо-Кавказского округа от 03.06.2013 по делу N А53-9523/2011, http://ras.arbitr.r (09.11.2023) (The Resolution of the FAS of the North Caucasus District dated 03.06.2013 on case N A53-9523/2011).

19. Определение Мирнинского районного суда Республики Саха (Якутия) от 28.06.2013 по делу № 9-222/2013/ (The ruling of the Mirninsky District Court of the Republic of Sakha (Yakutia) dated 28.06.2013 on case No. 9-222/2013/).

20. Համաշխարհային բանկ, «Էս-Էլ Ար Քոնսալթընթս», «ԱՎԱԳ Սոլյուշնս», ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, ՀԱՀ-ի Թուրփանջյանի անվան քաղաքականության վերլուծության կենտրոն, «Հանքարդյունաբերության

ոլորտի կայունության ռազմավարական գնահատում» Հայաստան, 2016, 227 էջ (World Bank, “ES-El Ar Consultants”, “Avag Solutions”, Responsible Mining Center of South Africa, Turpanjyan Policy Analysis Center of South Africa, “Strategic assessment of the stability of the mining industry-Armenia”, 2016, 227 p.).

21. ՀՀ վիճակագրական կոմիտե (Արմստատ), (I1-1) Թափոնների առաջացումը, ըստ գործունեության տեսակների, ըստ վտանգավորության դասերի և ըստ տարիների (մուտք 12.11.2023) (RA Statistical Committee (Armstat), (I1-1)).

22. **Վ. Վիվոդա և Ջ. Ֆուլչեր,** «Հանքարդյունաբերական թափոնների դասակարգում և կառավարում (Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք, Աշխատանքային փաստաթուղթ 1, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն)», ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան, Երևան, Հայաստան, 2017, էջ 1-10, http:/mlri.crm.aua.am (մուտք 10.11.2023) (V. Vivoda and J. Fulcher, “Mine Waste Classification and Management (Series on International Best Practice, Working Paper No. 1, Mining Legislation Reform Initiative)”, AUA Center for Responsible Mining, American University of Armenia, Yerevan, Armenia, 2017, p. 1-10, http://mlri.crm.aua.am).

23. **Տ.Կ. Բարսեղյան,** «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք. առաջին մաս», ԵՊՀ հրատ., Եր., 2014, 553 էջ (T.K. Barseghyan, “Civil law of the Republic of Armenia. Part One”, YSU ed., Yer., 2014, 553 p.).

24. **Օ. Գեղամյան, «**Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի որոշ առանձնահատկությունները ՀՀ օրենսդրության մեջ և պրակտիկայում», Պետություն և իրավունք, թիվ 1 (86) 2020թ., էջ 4-12 (O. Geghamyan, “Some features of the right of ownership to natural resources in the RA legislation and practice”, State and Law, N 1 (86) 2020, p. 4-12).

25. **В.В. Левочко, “**Добытые ресурсы недр как объекты гражданских прав: анализ законодательства”, Вестник московского городского педагогического университета, Серия «Юридические науки», 2017, No 3 (27), с. 127-141 (V.V. Levochko, “Extracted mineral resources as objects of civil rights: analysis of legislation”, Bulletin of the Moscow City Pedagogical University, the series "Legal Sciences", 2017, No. 3 (27), p. 127-141).

26. **В.В. Левочко, “**Проблемы гражданско-правового режима отходов в недропользовании: теория и практика”, DOI 10.22394/1818-4049-2017-78-1-180-187, УДК 347.1:34.03//Власть и управление на Востоке России. 2017. No 1 (78). с. 180-187 (V.V. Levochko, **“**The problems of civil law regime of wastes in the subsoil use: theory and practice”, DOI 10.22394/1818-4049-2017-78-1-180-187, UDC 347.1:34.03, Power and governance in the East of Russia, 2017, No. 1 (78), p. 180-187).

27. **В.В. Левочко**, **“**Объекты гражданских прав в недропользовании”, https://elib.sfu-kras.ru/handle/2311/147151?show=full (12.11.2023), 218 էջ (V.V. Levochko, **“**Objects of civil rights in subsoil use”, 218 p.).

ПРОБЛЕМЫ ПРАВА СОБСТВЕННОСТИ НА ОТХОДЫ НЕДРОПОЛЬЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

МАНЕ МАРКОСЯН
Советник ректора, Ереванский государственный университет
Аспирант кафедры Гражданского права Юридического факультета ЕГУ
Эл. почта: mane.markosyanlaw@gmail.com

Абстракт. Отходы недропользования в настоящее время приобрели большое экономическое значение, став предметом гражданско-правовых сделок. Вопросы права собственности на отходы недропользования как объектов гражданского права, несмотря на сложный правовой режим отходов, не урегулированы законодательством Республики Армения, в результате чего возникают проблемы интерпретации этого вопроса на теоретическом уровне и в рамках споров между пользователями недр и государством.

В настоящей статье рассматриваются вопросы права собственности на отходы недропользования как объекты гражданского права в отношениях пользования недрами. Затрагивается основное понятие отходов недропользования как объектов гражданских прав, раскрываются проблемы и пробелы в национальном законодательстве, касающиеся субъекта права собственности на отходы недропользования и осуществления полномочий, составляющих содержание права собственности. Далее изучаются и анализируются споры, возникающие в правоприменительной практике по вопросу права собственности на отходы недропользования.

На основании анализа, проведенного в настоящей статье, представляются предложения, направленные на уточнение законодательного регулирования права собственности на отходы недропользования разрешению споров на практике.

На основе анализа, проведенного в этой статье, представлены предложения, направленные на уточнение субъекта права собственности на отходы недропользования и момента возникновения права собственности, законодательного регулирования осуществления прав собственности на отходы недропользования, которые будут иметь существенное значение для разрешения споров, возникающих между пользователем недр и государством в правоприменительной практике.

THE PROBLEMS OF OWNERSHIP OF MINING WASTES IN THE REPUBLIC OF ARMENIA

Mane Markosyan
Adviser to the Rector, Yerevan State University,
PHD Student at the YSU Chair of Civil Law

Mining wastes have now acquired great economic importance, becoming a subject of civil law transactions. The issues of ownership of mining wastes as objects of civil law, despite their complex legal regime, are not regulated by the legislation of the Republic of Armenia, because of which problems arise in interpreting this issue at the theoretical level and within the framework of disputes triggering between the subsoil user and the state.

The present article discusses the issues of ownership of mining wastes as objects of civil law in the legal relations of subsoil use. The basic concept of mining waste as an object of civil rights is mentioned, the subject of ownership of mining wastes, problems and gaps in national legislation concerning the exercise of powers that constitute the content of ownership rights are revealed. Further, disputes arising in law enforcement practice on the ownership of mining waste are studied and analyzed.

Based on the analysis conducted in this article, proposals are presented aimed at clarifying the subject of ownership of mining waste and the moment of obtaining ownership upon mining wastes, as well as legislative regulation of the exercise of ownership rights to mining waste, which will be essential for resolving disputes arising between the subsoil user and the state in law enforcement practice.

Բանալի բառեր – *հանքարդյունաբերություն, ընդերքօգտագործման թափոններ, արտադրական լցակույտեր, տեխնածին հանքավայր, սեփականության իրավունք, ընդերքօգտագործման իրավունք, քաղաքացիական իրավունքի օբյեկտ:*

Ключевые слова: *недропользование, отходы недропользования, производственные отвалы, рукотворное месторождение, право собственности, право пользования недрами, объект гражданского права.*

Key words: *Mining, mining wastes, production dump, man-made deposit, ownership; subsoil use rights, object of civil law.*